



ՀՀ մշակույթի նախարարություն
«Պատմամշակութային արգելոց-թանգարանների
և պատմական միջավայրի պահպանության
ծառայություն» ՊՈԱԿ

«Էթնոս» էթնոմշակութային գիտական
հետազոտությունների կենտրոն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՆԱԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ»



միջազգային գիտաժողով
նվիրված Վանի պեղումների 100-ամյակին
ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ
(«Մեծամոր» պատմահնագիտական
արգելոց-թանգարան, նոյեմբերի 3-4)

Երևան 2016

**ԼԱՆԴՇԱՑՏԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄԸ ՎԱՂ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՆՐԱ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

1. Պատկերացումներն աշխարհագրական միջավայրի և դրա բաղադրատարրերի մասին էական դեր են խաղացել վաղ հասարակություններում ինքնության ձևավորման գործընթացում: Կախված բնապատմական միջավայրից՝ յուրաքանչյուր հասարակություն ստեղծել է արժեքային յուրահատուկ համակարգ և փորձել այն զարգացնել ու մոդելավորել ժամանակի ու տարածության մեջ: Այս իմաստով պատահական չէ, որ հնագույն հասարակություններն արժևորելու գործում այսօր կարևորվում է լանդշաֆտի (հաբիտատի) տարրերի փոխներգործության հարցը, ինչն աստիճանաբար դառնում է անցյալն ուսումնասիրող գիտությունների գերխնդիրը: Այս աշխատանքը նպատակ ունի անդրադառնալ լանդշաֆտի կազմակերպման տարբեր օրինակներին Հայկական լեռնաշխարհի բրոնզերկաթեդարյան մշակույթների համատեքստում: Նման հարցադրումը հնարավոր է քննարկել միայն միջմասնագիտական մակարդակում՝ հնագիտության, պատմության և աշխարհագրության, ինչպես նաև այլ գիտությունների տվյալների հիման վրա և որոշակի մեթոդաբանության կիրառմամբ:

2. Տեղանքը այն օրրանն է, որտեղ զարգանում է ցանկացած հասարակություն: Մինևույն ժամանակ հասարակության զարգացումն անխուսափելիորեն վերափոխում է բնական լանդշաֆտը, վերածելով այն մշակութայինի, այլ խոսքերով ասած, մարդկությունը զարգանում է ոչ միայն ֆիզիկական, այլև որոշակի սոցիալական և հոգևոր տարածություններում, որոնց և բնական տեղանքի համադրությունը հանգեցնում է հաբիտատի առաջացմանը: Ըստ այդմ՝ պատմամշակութային լանդշաֆտը կարելի է բաժանել մի քանի բաղադրատարրերի բնական, սոցիալ-տնտեսական, հոգևոր-ճիսական:

Բնական: Յուրաքանչյուր հասարակություն ձևավորվում է կոնկրետ բնական պայմաններում, որոնք շատ դեպքերում դառնում են վճռորոշ հասարակական և հոգևոր կյանքի ձևավորման ընթացքում: Այս խմբում կարելի է ընդգրկել առաջին հերթին ջրի աղբյուրները, հնագույն ճանապարհները և ճանապարհային խաչմերուկները,

բնական հանածոների հանքերը, բնական բարձունքները, քարանձավները, քարայրերը, ժայռային ապաստանները:

Սոցիալ-տնտեսական: Այս խմբում կարելի է միավորել բնակավայրերը: Ընդ որում բնակավայր հասկացությունը պետք է դիտարկել համալիր կերպով՝ ներառյալ ազդմերացիայի ողջ գոտին. հիմնական բնակատեղին, արբանյակները, դիտակետերը, կենսաապահովման կառույցները (ջրանցքներ, ջրամբարներ, դաշտեր, ամրացված փարախներ):

Հոգևոր-ծիսական: Այս խմբում կարելի է միավորել մեծածավալ (տաճարներ և տաճարական համալիրներ, դամբարանադաշտեր) և փոքրածավալ (հուշակոթողներ՝ վիշապ, մենհիր, խաչքար և այլն) սրբազան օբյեկտները, ինչպես նաև բնական լանդշաֆտի այն հատվածները որտեղ կենտրոնացված են այս հուշարձանները:

Բնական է, որ տարբեր վայրերում, որտեղ միավորվում են երեք նշված բաղադրատարրերը, այս գործոններից մեկը ստանում է գերակշիռ դեր: Բացի այդ, պատմամշակութային տեղանքի տեսքը ուղիղ համեմատական է տվյալ հասարակության կացութաձևին և զարգացման առանձնահատկություններին: Այսպես, եթե զարգացած բնակավայրային կյանքով բնորոշվող հասարակություններում պատմամշակութային լանդշաֆտի հիմնական բաղադրատարրերը կենտրոնանում են բնակավայրերի շուրջ, ապա քոչվորական և կիսաքոչվորական հասարակություններում ակնհայտ է ճանապարհների մշակութագոյացնող դերը:

Այս գործընթացն ամենևին էլ համաչափ չէ: Եթե զարգացման վաղագույն փուլերում բնական գործոնի նշանակությունը վճռորոշ է, ապա հետագա ժամանակաշրջանում սոցիալական և հոգևոր գործոններն ակտիվորեն վերափոխում են բնական տեղանքը: Արդյունքում, եթե նախադասակարգային շրջանում հասարակությունը սահմանափակվում է բնական տեղանքի վերափոխմամբ, ապա դասակարգայինը՝ ստեղծում է նոր տեղանք, որտեղ թելադրողը սոցիալական և հոգևոր գործոններն են:

3. Վաղ հասարակությունների սոցիալ-տնտեսական և ծիսապատմամունքային տեղանքի ուսումնասիրության համար ներկայումս կիրառվում է Աշխարհագրական տեղեկատվական համակարգը՝ GIS (Geographic Information System), որը համակարգչային համապատասխան ծրագրով աշխատող գործիք է և որի միջոցով կազմակերպվում է աշխարհագրական տվյալների կուտակումը շտեմարանում, ապա քարտեզագրումը և վերլուծությունը: Քարտեզները թեմատիկ բովան-

դակույթուն կրող տարածքի փոքրացված և համակարգված պատկերներ են, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել, վերլուծել վաղ հասարակությունների համար կենսական նշանակություն ունեցող բնական միջավայրի բաղադրատարրերի դերը և դրանից ձևավորվող մշակութային, սոցիալական գործոնները: GIS քարտեզները լինում են երկչափ (2D) և եռաչափ (3D)՝ ըստ իրենց հատկանիշների ու առանձնահատկությունների: Հնագիտության համար հատկապես կարևոր է GIS-ի միջոցով վերակառուցել փոփոխությունների ենթարկված լանդշաֆտը (հանքարդյունաբերության հետևանքով շահագործված և խեղաթուրված լեռներն ու բլուրները), ուսումնասիրել դրանք և ապա թվայնացնել, մոդելավորել և դիտարկել այն եռաչափ մոդելի ներքո: GIS-ը կարող է ուսումնասիրել ցանկացած հնագիտական հուշարձան և միջավայր, սկսած ընդհանուր մակարդակներից (հնագիտական միջավայրի անհատական և խմբային հուշարձաններ) մինչև վերացական մշակութային: Ներկայումս քարտեզագրության և դրանց երկչափ ու եռաչափ մոդելավորման համար օգտագործվում են թվայնացված խորհրդային 1:10.000, 1:25.000 և 1:50.000 տոպոգրամայինները և SRTM 1 (30 մետր) և SRTM 3 (90 մետր) arc second Resolution արբանյակային DEM (Digital elevation model = Թվային բարձրությունների մոդել) ռելիեֆի բարձրությունների մակերեսի տվյալները: Խնդիր է դրվում հնարավորինս բացարձակ կետերով ճշգրտել և ստուգել լանդշաֆտի բարձրությունները, ապա քարտեզների եռաչափ մոդելավորմամբ դիտարկել նշված հուշարձաններն այլ կետերից և դրանց փոխկապակցվածությունը՝ վերականգնելով կարևոր նշանակություն ունեցող ճանապարհ(ներ)ի սահմանները, ջրագրությունը:

Հնագիտական հուշարձանների ուսումնասիրության, լանդշաֆտի վերլուծության և քարտեզագրության համար GIS-համակարգը առաջատար դիրք է զբաղեցնում, որն աշխատելով տարածական տիրույթում, տվյալները տարածության մեջ արտահայտում է պայմանական X (երկայանական), Y (լայնական), Z (բարձրություն ծովի մակերևույթից) չափորոշիչների միջոցով: Ցանկացած տեսակի հնագիտական միջավայր նույնպես արտահայտվում է X-Y-Z չափորոշիչներով: GIS-ի կիրառմամբ ավելի ամբողջական է դառնում հնագիտական հուշարձանից պեղված նյութի տեղադրումը (վիրտուալ տարածական միջավայր), համարակալումն ու քարտեզագրումը, որոնք հնագետին տալիս են աշխարհագրական միջավայրի մասին առավել ամբողջական տեղեկատվություն՝ դառնալով ավելի արդյունավետ և ստեղծելով ինտերակտիվ քարտեզներ, ինչն իր հերթին հանգեցնում է տվյալների շտեմարանում հնագիտական բազմաթիվ հուշարձանների ցանկերի ձևավորմանը՝

ստեղծելով վիրտուալ աշխարհագրական կոորդինատներով հագեցված կետեր (ըստ իրենց հասկանիչների): GIS-ը հնարավորություն է տալիս ոչ միայն ամրագրել հնագիտական հուշարձանների տարածական բաշխվածությունը, այլ նաև կանխատեսել գտնվելու վայրը, կատարել հուշարձանների համաժամանակյա և տարաժամանակյա դասակարգում: